Հրապարակվել է 17.11.2023թ.
Տեղեկատվական ամփոփագրում նշված պայմանները
գործարքի կատարման պահին կարող են փոփոխված լինել:

Մանրամասների համար խնդրում ենք դիմել՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ,
գլխամասային գրասենյակ՝ Նալբանդյան 48, ք. Երևան 0010, ՀՀ,
Հեռ.՝ +(37410) 59 20 19, +(37410) 59 20 20, +(37460) 37 25 00,
Whatsapp՝ +(37494) 44 11 88, Viber՝ +(37494) 44 11 88
Ինտերնետային կայք՝ www.amiobank.am, Էլ. փոստ՝ info@amiobank.am

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ
(ՀՀ դրամ)

1. Ավանդի անվանական (պարզ) տոկոսադրույքերն ըստ տեսակների և տոկոսների վճարման հաճախականության.

Ավանդ «Շահավետ»[1]					
Ավանդի ներդրման ժամկետը (օրերով)	**Տարեկան տոկոսադրույքը (%) ըստ տոկոսների վճարման հաճախականության (Տարեկան տոկոսային եկամտաբերություն)**				
	Ժամկետի սկզբում	**Ամսական**	**Եռամսյակային**	**Տարեկան**	**Ժամկետի վերջում**
31-90 օր	5.85% (5.98%)	5.95% (6.11%)	-	-	6.20% (6.20%)
91-180 օր	6.65% (7.00%)	6.75% (6.96%)	6.85% (7.03%)	-	7.20% (7.20%)
181-365 օր	8.25% (8.99%)	8.75% (9.11%)	8.85% (9.15%)	-	9.20% (9.20%)
366-550 օր	8.35% (9.33%)	9.15% (9.54%)	9.25% (9.58%)	9.35% (9.35%)	9.70% (9.70%)
551-730 օր	8.50% (9.77%)	9.65% (10.09%)	9.75% (10.11%)	9.85% (9.85%)	10.20% (10.20%)
731-1095 օր	-	9.65% (10.09%)	9.75% (10.11%)	9.85% (9.85%)	10.20% (10.20%)

Ավանդ «Շահավետ՝ համալրման հնարավորությամբ»[2]					
Ավանդի ներդրման ժամկետը (օրերով)	**Տարեկան տոկոսադրույքը (%) ըստ տոկոսների վճարման հաճախականության (Տարեկան տոկոսային եկամտաբերություն)**				
	Ժամկետի սկզբում	**Ամսական**	**Եռամսյակային**	**Տարեկան**	**Ժամկետի վերջում**
31-90 օր	-	-	-	-	-
91-180 օր	-	6.45% (6.64%)	6.55% (6.71%)	-	6.90% (6.90%)
181-365 օր	-	8.45% (8.79%)	8.55% (8.83%)	-	8.90% (8.90%)
366-550 օր	-	8.85% (9.22%)	8.95% (9.25%)	9.05% (9.05%)	9.40% (9.40%)
551-730 օր	-	9.35% (9.76%)	9.45% (9.79%)	9.55% (9.55%)	9.90% (9.90%)
731-1095 օր	-	9.35% (9.76%)	9.45% (9.79%)	9.55% (9.55%)	9.90% (9.90%)

[1] Ավանդն առանց համալրման և նվազեցման հնարավորության է Ավանդի պայմանագրի ողջ գործողության ընթացքում: Ավանդը վաղաժամկետ դադարեցնելու դեպքում կատարվում է հաշվարկված, հաշվեգրված և/կամ վճարված տոկոսների վերահաշվարկ՝ համաձայն Բանկային հաշվում եղած դրական դրամական միջոցների մնացորդի դիմաց վճարվող՝ գործարքի պահին Բանկի կողմից սահմանված տոկոսադրույքի:

[2] Ավանդն ունի լրացուցիչ համալրումների հնարավորություն՝ բացառությամբ Ավանդի պայմանագրի գործողության վերջին 2 (երկու) ամիսների: Ընդ որում, Ավանդը կարող է համալրվել Ավանդի պայմանագրի կնքման պահին ներդրված գումարի առավելագույնը 200%-ի չափով, առանց քանակային սահմանափակումների՝ մինչև Ավանդի համար սահմանված առավելագույն շեմը: Ավանդը կարող է համալրվել նաև երրորդ անձի կողմից, եթե այլ բան նախատեսված չէ Ավանդի պայմանագրով: Ավանդը վաղաժամկետ դադարեցնելու դեպքում կատարվում է հաշվարկված, հաշվեգրված և/կամ վճարված տոկոսների վերահաշվարկ՝ համաձայն Բանկային հաշվում եղած դրական դրամական միջոցների մնացորդի դիմաց վճարվող՝ գործարքի պահին Բանկի կողմից սահմանված տոկոսադրույքի:

Ավանդ «Շահավետ՝ մասնակի նվազեցման հնարավորությամբ»[3]					
Ավանդի ներդրման ժամկետը (օրերով)	Տարեկան տոկոսադրույքը (%) ըստ տոկոսների վճարման հաճախականության (Տարեկան տոկոսային եկամտաբերություն)				
	Ժամկետի սկզբում	Ամսական	Եռամսյակային	Տարեկան	Ժամկետի վերջում
31-90 օր	-	-	-	-	-
91-180 օր	-	6.45% (6.64%)	6.55% (6.71%)	-	6.90% (6.90%)
181-365 օր	-	8.45% (8.79%)	8.55% (8.83%)	-	8.90% (8.90%)
366-550 օր	-	8.85% (9.22%)	8.95% (9.25%)	9.05% (9.05%)	9.40% (9.40%)
551-730 օր	-	9.35% (9.76%)	9.45% (9.79%)	9.55% (9.55%)	9.90% (9.90%)
731-1095 օր	-	9.35% (9.76%)	9.45% (9.79%)	9.55% (9.55%)	9.90% (9.90%)

Ավանդ «Շահավետ՝ վաղաժամկետ դադարեցման հնարավորությամբ»[4]					
Ավանդի ներդրման ժամկետը (օրերով)	Տարեկան տոկոսադրույքը (%) ըստ տոկոսների վճարման հաճախականության (Տարեկան տոկոսային եկամտաբերություն)				
	Ժամկետի սկզբում	Ամսական	Եռամսյակային	Տարեկան	Ժամկետի վերջում
31-90 օր	-	-	-	-	5.70% (5.70%)
91-180 օր	-	6.25% (6.43%)	6.35% (6.50%)	-	6.70% (6.70%)
181-365 օր	-	8.25% (8.57%)	8.35% (8.62%)	-	8.70% (8.70%)
366-550 օր	-	8.65% (9.00%)	8.75% (9.04%)	8.85% (8.85%)	9.20% (9.20%)
551-730 օր	-	9.15% (9.54%)	9.25% (9.58%)	9.35% (9.35%)	9.70% (9.70%)
731-1095 օր	-	9.15% (9.54%)	9.25% (9.58%)	9.35% (9.35%)	9.70% (9.70%)

Ավանդ «Շահավետ՝ համալրման և մասնակի նվազեցման հնարավորությամբ»[2, 3]					
Ավանդի ներդրման ժամկետը (օրերով)	Տարեկան տոկոսադրույքը (%) ըստ տոկոսների վճարման հաճախականության (Տարեկան տոկոսային եկամտաբերություն)				
	Ժամկետի սկզբում	Ամսական	Եռամսյակային	Տարեկան	Ժամկետի վերջում
31-90 օր	-	-	-	-	-
91-180 օր	-	6.15% (6.33%)	6.25% (6.40%)	-	6.60% (6.60%)
181-365 օր	-	8.15% (8.46%)	8.25% (8.51%)	-	8.60% (8.60%)
366-550 օր	-	8.55% (8.89%)	8.65% (8.93%)	8.75% (8.75%)	9.10% (9.10%)
551-730 օր	-	9.05% (9.43%)	9.15% (9.47%)	9.25% (9.25%)	9.60% (9.60%)
731-1095 օր	-	9.05% (9.43%)	9.15% (9.47%)	9.25% (9.25%)	9.60% (9.60%)

[3] Ավանդն ունի մասնակի նվազեցման հնարավորություն՝ բացառությամբ Ավանդի պայմանագրի գործողության առաջին 2 (երկու) ամիսների: Ընդ որում, Ավանդից կարող են կատարվել մասնակի ելքագրումներ Ավանդի պայմանագրի կնքման պահին ներդրված գումարի առավելագույնը 50%-ի չափով, առանց քանակային սահմանափակումների՝ մինչև Ավանդի համար սահմանված նվազագույն շեմը: Նվազեցվող մասի նկատմամբ հաշվարկված, հաշվեգրված և/կամ վճարված տոկոսների վերահաշվարկ չի կատարվում: Ավանդը վաղաժամկետ դադարեցնելու դեպքում կատարվում է հաշվարկված, հաշվեգրված և/կամ վճարված տոկոսների վերահաշվարկ՝ համաձայն Բանկային հաշվում եղած դրական դրամական միջոցների մնացորդի դիմաց վճարվող՝ գործարքի պահին Բանկի կողմից սահմանված տոկոսադրույքի:

[4] Ավանդը վաղաժամկետ դադարեցնելու դեպքում կատարվում է Ավանդի պայմանագրի կնքման պահից մինչև դադարեցման նախորդ օրը հաշվարկված, հաշվեգրված և/կամ վճարված տոկոսների վերահաշվարկ՝ Ավանդի պայմանագրի կնքման պահից մինչև դադարեցման նախորդ օրն ընկած ժամանակահատվածին համապատասխանող ժամկետի համար տվյալ Ավանդի պայմանագրի կնքման պահի դրությամբ սահմանված տոկոսադրույքով, իսկ եթե տվյալ ժամկետին համապատասխանող տոկոսադրույքը սահմանված չէ, ապա վերահաշվարկը կատարվում է տվյալ ժամկետին համապատասխանող տոկոսների ստացման «ամսական» եղանակի համար սահմանված տոկոսադրույքով: Ավանդի ներդրման պահից սկսած մինչև 30-րդ օրը դադարեցնելու դեպքում կատարվում է հաշվարկված, հաշվեգրված և/կամ վճարված տոկոսների վերահաշվարկ՝ համաձայն Բանկային հաշվում եղած դրական դրամական միջոցների մնացորդի դիմաց վճարվող՝ գործարքի պահին Բանկի կողմից սահմանված տոկոսադրույքի:

Ավանդ «Շահավետ՝ համալրման և վաղաժամկետ դադարեցման հնարավորությամբ»[5]					
Ավանդի ներդրման ժամկետը (օրերով)	Տարեկան տոկոսադրույքը (%) ըստ տոկոսների վճարման հաճախականության (Տարեկան տոկոսային եկամտաբերություն)				
	Ժամկետի սկզբում	Ամսական	Եռամսյակային	Տարեկան	Ժամկետի վերջում
31-90 օր	-	-	-	-	-
91-180 օր	-	5.95% (6.11%)	6.05% (6.19%)	-	6.40% (6.40%)
181-365 օր	-	7.95% (8.25%)	8.05% (8.30%)	-	8.40% (8.40%)
366-550 օր	-	8.35% (8.68%)	8.45% (8.72%)	8.55% (8.55%)	8.90% (8.90%)
551-730 օր	-	8.85% (9.22%)	8.95% (9.25%)	9.05% (9.05%)	9.40% (9.40%)
731-1095 օր	-	8.85% (9.22%)	8.95% (9.25%)	9.05% (9.05%)	9.40% (9.40%)

Ավանդ «Շահավետ՝ մասնակի նվազեցման և վաղաժամկետ դադարեցման հնարավորությամբ»[6]					
Ավանդի ներդրման ժամկետը (օրերով)	Տարեկան տոկոսադրույքը (%) ըստ տոկոսների վճարման հաճախականության (Տարեկան տոկոսային եկամտաբերություն)				
	Ժամկետի սկզբում	Ամսական	Եռամսյակային	Տարեկան	Ժամկետի վերջում
31-90 օր	-	-	-	-	-
91-180 օր	-	6.10% (6.27%)	6.20% (6.35%)	-	6.55% (6.55%)
181-365 օր	-	8.10% (8.41%)	8.20% (8.46%)	-	8.55% (8.55%)
366-550 օր	-	8.50% (8.84%)	8.60% (8.88%)	8.70% (8.70%)	9.05% (9.05%)
551-730 օր	-	9.00% (9.38%)	9.10% (9.42%)	9.20% (9.20%)	9.55% (9.50%)
731-1095 օր	-	9.00% (9.38%)	9.10% (9.42%)	9.20% (9.20%)	9.55% (9.55%)

Ավանդ «Շահավետ՝ համալրման, մասնակի նվազեցման և վաղաժամկետ դադարեցման հնարավորությամբ»[7]					
Ավանդի ներդրման ժամկետը (օրերով)	Տարեկան տոկոսադրույքը (%) ըստ տոկոսների վճարման հաճախականության (Տարեկան տոկոսային եկամտաբերություն)				
	Ժամկետի սկզբում	Ամսական	Եռամսյակային	Տարեկան	Ժամկետի վերջում
31-90 օր	-	-	-	-	-
91-180 օր	-	5.80% (5.96%)	5.90% (6.03%)	-	6.25% (6.25%)
181-365 օր	-	7.80% (8.08%)	7.90% (8.14%)	-	8.25% (8.25%)
366-550 օր	-	8.20% (8.52%)	8.30% (8.56%)	8.40% (8.40%)	8.75% (8.75%)
551-730 օր	-	8.70% (9.06%)	8.80% (9.09%)	8.90% (8.90%)	9.25% (9.25%)
731-1095 օր	-	8.70% (9.06%)	8.80% (9.09%)	8.90% (8.90%)	9.25% (9.25%)

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ (ՊԱՐԶ) ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՄՈՒՏ ԿՍՏԱՆԱՅԻՔ ԴՈՒՔ, ԵԹԵ ՁԵՐ ԱՎԱՆԴԻ ԴԻՄԱՑ ՍՏԱՑՎԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՎԵՐԱՆԵՐԴՆԵԻՔ ԱՎԱՆԴԻ ՏԵՍՔՈՎ:

[5] Ավանդի նկատմամբ տարածվում է 2-րդ հղման պայմանը, բացառությամբ վաղաժամկետ դադարեցման պայմանի, որի դեպքում կիրառվում է 4-րդ հղման պայմանը:

[6] Ավանդի նկատմամբ տարածվում է 3-րդ հղման պայմանը, բացառությամբ վաղաժամկետ դադարեցման պայմանի, որի դեպքում կիրառվում է 4-րդ հղման պայմանը:

[7] Ավանդի նկատմամբ տարածվում է 2-րդ և 3-րդ հղումների պայմանները, բացառությամբ վաղաժամկետ դադարեցման պայմանի, որի դեպքում կիրառվում է 4-րդ հղման պայմանը:

Ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերությունը հաշվարկի բանաձև՝

$$A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1 + APY)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝

A - ավանդի սկզբնական գումարն է:

n - ավանդի դիմաց դրամական հոսքերի հերթական համարն է:

N - ավանդի դիմաց դրամական հոսքերի վերջին համարն է (ներառյալ նաև ավանդի ներդրման պահին դրամական հոսքը), որից հետո ավանդային պայմանագրի ժամկետը համարվում է ավարտված:

Kn - ավանդի ներդրման պահին և/կամ ավանդի գործողության ընթացքում ներդրված ավանդի և/կամ կապիտալացված տոկոսագումարների, առկայության դեպքում պարտադիր վճարների հոսքեր:

Dn - այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել ավանդի ներդրման օրից մինչև ավանդի դիմաց կատարվող հերթական՝ n-րդ դրամական հոսքերը ներառյալ: Այն դեպքում, երբ ավանդի ներդրման պահին է դրամական հոսքերը, D1 = 0:

2. **Ավանդի ընդհանուր պայմաններ.**
   - **Ավանդատու՝** ֆիզիկական անձ (ռեզիդենտ, ոչ ռեզիդենտ),
   - **Ավանդի տեսակը՝ ժամկետային, 31-1095 օր** (սահմանված առավելագույն ժամկետից ավել ժամկետով Ավանդ ներդնելու դեպքում ավանդի պայմանները կարող են սահմանվել պայմանագրային (անհատական) հիմունքներով),
   - **Ավանդի ներդրման նվազագույն գումարը՝** 30,000 ՀՀ դրամ,
   - **Ավանդի ներդրման գումարը մեկ ավանդատուի գծով օրական** 250,000,000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում ավանդի պայմանները կարող են սահմանվել պայմանագրային (անհատական) հիմունքներով:
   - **Տոկոսների վճարման հաճախականությունը՝** ժամկետի սկզբում, ամսական, եռամսյակային, տարեկան կամ ավանդի ժամկետի վերջում:
   - **Տոկոսների կապիտալացում՝** Ավանդը կարող է ներդրվել նաև տոկոսների ամսական, եռամսյակային կամ տարեկան կապիտալացման տարբերակով: Տվյալ դեպքում հաշվարկված տոկոսները հաշվեգրվում են ավանդի մնացորդին՝ ըստ տոկոսների ստացման ընտրված հաճախականության: Այս դեպքում կիրառվում են տոկոսների ստացման եղանակին համապատասխան սույն ամփոփագրի 1-ին կետով սահմանված տարեկան տոկոսադրույքները:
   - **Տոկոսների հաշվարկը՝** Բանկը տոկոսների հաշվարկն իրականացնում է Ավանդը Բանկ մուտք լինելու օրվանից մինչև այն Ավանդատուին վերադարձնելու կամ Ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը՝ օրական կտրվածքով: Ընդ որում: Բանկը յուրաքանչյուր օրվա տոկոսադրույքը հաշվարկում է՝ որպես բաժանարար հիմք ընդունելով 1/365 օր հարաբերակցությունը: Տոկոսները հաշվարկվում են Ավանդի փաստացի մնացորդի նկատմամբ:

3. **Ավանդի ձևակերպման, երկարաձգման և դադարեցման դրույթներ.**
   - Ժամկետային ավանդ ներդնելու համար Ավանդատուն պետք է Բանկում ունենա/բացի բանկային/քարտային հաշիվ:
   - Բանկային/քարտային հաշվի բացման և սպասարկման միջնորդավճարների չափերը սահմանվում են համաձայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագների:
   - Բանկը պարտավոր է ավանդի գումարը կամ դրա մի մասը վերադարձնել Ավանդատուին նրա առաջին իսկ պահանջով:
   - Ավանդը ժամկետից շուտ պահանջելու դեպքում մինչ այդ Ավանդատուին վճարված տոկոսագումարի վերահաշվարկման արդյունքում առաջացած հետ գանձման ենթակա տոկոսները նվազեցվում են Ավանդի մայր գումարից:
   - Ավանդատուի կողմից ավանդի ժամկետի ավարտից հետո այն չպահանջելու դեպքում Բանկն իրավունք ունի ավտոմատ երկարաձգել Ավանդի պայմանագրի գործողության ժամկետը Ավանդի պայմանագրով սահմանված պայմաններով և երկարաձգման պահին տվյալ Ավանդի համար Բանկում գործող տարեկան տոկոսադրույքով, եթե այլ բան նախատեսված չէ Ավանդի պայմանագրով: Ընդ որում՝
     - Ավանդի ժամկետի ավարտին տվյալ Ավանդի տեսակի ներգրավումը Բանկում դադարեցված լինելու դեպքում Ավանդի պայմանագիրը երկարաձգվում է երկարաձգման պահին տվյալ Ավանդի ժամկետին համապատասխանող Բանկում գործող ամենաբարձր անվանական տոկոսադրույք ունեցող տվյալ արժույթով ավանդատեսակի պայմաններով:
   - Եթե երկարաձգման պահին Ավանդի տվյալ ժամկետին համապատասխանող ժամկետով ավանդատեսակը բացակայում է Բանկում, ապա Ավանդի պայմանագիրը երկարաձգվում է այդ ժամկետին առավել մոտ ժամկետով Բանկում գործող ամենաբարձր անվանական տոկոսադրույք ունեցող տվյալ արժույթով տվյալ ավանդատեսակի պայմաններով:
   - Պայմանագրի գործողության ընթացքում Բանկն իրավասու է միակողմանի փոփոխել պայմանագրում նախատեսված ավտոմատ երկարաձգման պայմանը, նախօրոք, այդ մասին, երկարաձգման ենթակա ժամկետի ավարտից առնվազն 15 օր առաջ տեղյակ պահելով Ավանդատուին:
   - Ավանդի ժամկետի երկարաձգման դեպքում օրերի և ավանդի դիմաց տոկոսների հաշվարկը սկսվում է երկարաձգման օրվանից ներառյալ:
   - Եթե Ավանդի վերջնաժամկետը ոչ աշխատանքային օր է, ապա Ավանդի գումարը վերադարձվում/երկարաձգվում է ոչ աշխատանքային օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ Ավանդի պայմանագրով սահմանված ժամկետի համար հաշվարկված տոկոսագումարներին ավելացնելով նաև ոչ աշխատանքային օրերի համար հաշվարկված տոկոսագումարները:
   - Ավանդի պայմանագրով սահմանված Ավանդի տոկոսադրույքը պայմանագրային ժամկետում փոփոխման ենթակա չէ:

4. **Այլ լրացուցիչ պայմաններ.**
   - Ավանդատուն իրավունք ունի Ավանդը ներդնել հօգուտ երրորդ անձի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
   - Ավանդատուն պարտավոր է պահպանել ՀՀ օրենքների և դրանց համապատասխան սահմանված բանկային կանոնների, ժամկետային ավանդների ընդունման մասին Բանկում գործող ընթացակարգերի պահանջները:
   - Ավանդը վերադարձվում է Ավանդատուին այն արժույթով, որով ներդրվել է այն:
   - Եթե ավանդը ներդրվում է արտարժույթով, ապա Ավանդատուն գրավոր հավաստում է, որ ավանդային պայմանագիրը կնքելու պահին գիտակցել ու ընդունել է արտարժույթի փոխարժեքի փոփոխման հետևանքով հնարավոր ռիսկերը:

- Ավանդը, դրա մասը և (կամ) դրա վրա հաշվեգրված տոկոսները ստանալիս՝ Ավանդատուն Բանկ է ներկայանում անձը հաստատող փաստաթղթով:
- Պայմանագրի իր օրինակը կորցնելու, հասցեի փոփոխության, Ավանդատուին նույնականացնելու համար այլ անհրաժեշտ փաստաթղթերի կորստի կամ փոփոխության դեպքում, Ավանդատուն պարտավոր է 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում տեղյակ պահել Բանկին անհրաժեշտ փոփոխություններ իրականացնելու համար, ընդ որում՝ Ավանդատուն պատասխանատվություն է կրում հիշյալ ժամկետում Բանկին համապատասխան փոփոխությունների մասին չտեղեկացնելու հետևանքների համար:
- Ավանդային պայմանագրի գործողության ընթացքում կատարված փոփոխությունները՝ պայմանագրի պայմանների, կողմերի իրավունքների, պարտականությունների, պատասխանատվության սահմանման, փոփոխման կամ դադարեցման կամ ավանդային պայմանագրի վրա որևէ ազդեցություն ունեցող Բանկի ներքին ակտերի փոփոխման դեպքում, որը հանգեցնում է տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխման, Բանկը պարտավոր է տեղեկացնել Ավանդատուին գրավոր եղանակով՝ իր նախընտրած կապի միջոցով, նոր պայմանների վերաբերյալ՝ տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխման օրվանից առնվազն 15 օր առաջ: Ավանդատուն իր գրավոր դիմումի հիման վրա կարող է հրաժարվել սույն կետով սահմանված տեղեկատվությունը ստանալու իրավունքից՝ պարտադիր ներկայացման տեղեկատվությունը նախընտրելի այլ կապի միջոցներով ստանալու պայմանով: Ընդ որում, Ավանդատուն իրավունք ունի իր գրավոր դիմումով (այդ թվում էլեկտրոնային) միակողմանի փոփոխելու հաղորդակցման միջոցը ոչ ավելի, քան տարին մեկ անգամ, և այդ փոփոխությունը կիրառվում է գրավոր դիմումը Բանկի կողմից ստանալուց 30 օր հետո իրականացվող հաղորդակցման նկատմամբ:
- **Բանկը, հանդիսանալով Ֆիզիկական անձ-ավանդատուի հարկային գործակալ, կատարում է գանձումներ համաձայն ՀՀ և ԱՀ հարկային օրենսդրության: Ավանդներից ստացված եկամուտները ենթակա են հարկման ՀՀ տարածքում՝ ավանդի դիմաց հաշվեգրված տոկոսագումարի 10% (տաս տոկոսի) չափով, ԱՀ տարածքում՝ 5% (հինգ տոկոսի) չափով, իսկ օտարերկրյա քաղաքացիներից և քաղաքացիություն չունեցող անձանցից՝ 10% (տաս տոկոսի) չափով:**
- «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, ֆինանսական գործառնությունների դիմաց վճարվող տոկոսագումարներն ավանդատուի ցանկությամբ կարող են վճարվել ՀՀ դրամով, ինչպես նաև այն արտարժույթով, որով ներգրավվել է ավանդը:

5. **Լրացուցիչ հնարավորություններ**
- **Ավանդատուներին** տրամադրվում է ավանդի գրավով վարկ կամ վարկային գիծ ստանալու հնարավորություն:
- Կանխիկ մուտքագրված ավանդները և դրանց դիմաց կուտակված տոկոսները տրամադրվում են առանց միջնորդավճարի՝ 0 ՀՀ դրամ:
- Առնվազն 180 օր ավանդային հաշվին պահված անկանխիկ մուտքագրված գումարները տրամադրվում են առանց միջնորդավճարի՝ 0 ՀՀ դրամ: Մնացած դեպքերում անկանխիկ մուտքագրված գումարները տրամադրվում են համաձայն գործարքի պահին Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագների:
- Ավանդատուի ցանկությամբ տրամադրվում է անվճար տարեկան սպասարկմամբ **«Mastercard»** կամ **«VISA»** վճարային համակարգի հետևյալ վճարային քարտը (այսուհետ՝ Քարտ).
  - ✓ 1,000,000 -ից մինչև 15,000,000 ՀՀ դրամ կամ դրան համարժեք արտարժույթով ավանդ/ների մնացորդի դեպքում՝ MC Standard կամ VISA Classic վճարային Քարտ,
  - ✓ 15,000,001 ՀՀ դրամ և ավել կամ դրան համարժեք արտարժույթով ավանդ/ների մնացորդի դեպքում՝ MC Gold կամ VISA Gold վճարային Քարտ*,
  - ✓ նվազագույնը 50,000,000 ՀՀ դրամ կամ դրան համարժեք արտարժույթով ավանդ/ների մնացորդի դեպքում՝ Visa Platinum կամ MC Platinum տեսակի վճարային Քարտ*.

  **Ավանդատուի ցանկության դեպքում սահմանված քարտատեսակի փոխարեն կարող է տրամադրվել տվյալ քարտատեսակի դասից ավելի ցածր դասի Քարտ՝ անվճար: Մեկ ավանդի շրջանակներում տրամադրվում է մեկ հատ անվճար քարտ, նույն Ավանդատուի անունով Բանկում մեկից ավելի ավանդ ներդնելու դեպքում, կարող է տրամադրվել առավելագույնը 2 հատ անվճար քարտ, ընդ որում քարտերը պետք է լինեն տարբեր արժույթներով:*

  Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ հաճախորդներին ավանդի շրջանակներում քարտ չի տրամադրվում:
- Քարտը տրամադրվում է անվճար՝ առանց սպասարկման վճարի, Ավանդի պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում:
- Ավանդատուի գործող ավանդի/ների մարման/վաղաժամկետ դադարեցման դեպքում այդ ամսաթվին հաջորդող ամսվանից սկսած Բանկն իրավունք ունի Քարտի համար կիրառել տարեկան սպասարկման վճար՝ համաձայն տվյալ քարտատեսակի պայմաններով տվյալ պահին սահմանված սակագնի:
- Քարտը տրամադրվում է Ավանդի պայմանագրի գործողության ժամանակահատվածում թվով մեկ հատ: Քարտի սպասարկման այլ պայմանները՝ համաձայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագների:
- Քարտի վերաթողարկում՝
  - Քարտի ժամկետը լրանալու դեպքում Ավանդի գործողության ժամկետում՝ անվճար (սպասարկման վճարը և հաշվի չնվազող մնացորդը՝ 0 ՀՀ դրամ), քարտի սպասարկման այլ պայմանները՝ համաձայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագների,
  - Ավանդի ժամկետը լրացած լինելու և չերկարաձգվելու դեպքում՝ համաձայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագների:
  - Եթե քարտը տրամադրվել է վերաթողարկման պահին փակված ավանդի հիման վրա, բայց վերաթողարկման պահին հաճախորդի անունով գործում է այլ ավանդ և եթե քարտի դասը համապատասխանում է գործող ավանդի մնացորդին, ապա Բանկն իրավունք ունի վերաթողարկել քարտը անվճար տարեկան սպասարկմամբ:
  - Եթե Ավանդատուն դիմում է Քարտի ստացման կամ քարտի ժամկետը լրանալու դեպքում վերաթողարկման համար ավանդային պայմանագրի գործողության ժամանակահատվածում և եթե Բանկում տվյալ պահին չի թողարկվում սույն կետով սահմանված քարտատեսակը/ները, ապա Քարտի տեսակը որոշվում է տվյալ պահին Բանկում գործող ժամկետային ավանդների համար նախատեսված պայմանների համաձայն:

6. **Տեղեկատվություն սակագների և տուժանքների մասին՝**
   - Ավանդային հաշվի բացման, վարման և փակման ընթացքում տուժանքներ չեն կիրառվում:
   - **Ավանդատուն իրավունք ունի հաղորդակցվել Բանկի հետ իր նախընտրած եղանակով՝ էլեկտրոնային եղանակով կամ փոստային կամ կապի այլ միջոցով (եթե այդպիսին նախատեսված է Բանկի կողմից): Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումն ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:**
   - Հաշիվների քաղվածքը Բանկը տրամադրում է հաճախորդին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և/կամ Հաճախորդի հետ համաձայնեցված պարբերականությամբ և եղանակով: Յուրաքանչյուր ամիս պարտադիր տրամադրվող քաղվածքները Բանկի կողմից տրամադրվում են անվճար:
7. **Վեճերի լուծման կարգը և Ավանդատուի իրավունքների պաշտպանությունը՝**
   - Ավանդի պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները կարգավորվում են կողմերի միջև բանակցությունների միջոցով, իսկ նման համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
   - Ավանդի պայմանագրից բխող բողոք առաջանալու դեպքում, Ավանդատուն կարող է դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին կամ դատարան:
   - Բանկը պարտավոր **է քննել Ավանդատուի բողոք-պահանջը, եթե այն** ներկայացվել է մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն պահից, երբ Ավանդատուն իմացել է կամ կարող էր իմանալ իր իրավունքի խախտման մասին:
   - Բանկը պարտավոր է 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում Ավանդատուին տալ վերջնական պատասխան: Բանկի պատասխանը Ավանդատուին չբավարարելու դեպքում, վերջինս վեց ամսվա ընթացքում կարող է դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին, համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի, կամ դիմել դատարան՝ օրենքով սահմանված կարգով: Ֆինանսական համակարգի հաշտարարը իրավունք ունի քննելու այն պահանջները, որոնք ներկայացվել են հաճախորդի կողմից կազմակերպության դեմ, կապված են կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների հետ և պարունակում են 10,000,000 ՀՀ դրամ կամ դրան համարժեք այլ արժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջ:
8. **Երաշխավորված ավանդի չափերը՝**
   - «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն, ՀՀ տարածքում գործող բանկերում ֆիզիկական անձանց (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի) բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:
   - Երաշխավորվում են ավանդատուի ինչպես դրամային, այնպես էլ արտարժութային ավանդները: Օրենքով սահմանված են երաշխավորված ավանդների հետևյալ չափերը.
   - եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը տասնվեց միլիոն հայկական դրամ է.
   - եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը յոթ միլիոն հայկական դրամ է.
   - եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և դրամային բանկային ավանդի գումարը յոթ միլիոն հայկական դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև տասնվեց միլիոն հայկական դրամով.
   - եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է յոթ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժութային բանկային ավանդը՝ յոթ միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:
   - Ավանդատուի՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ և ավանդատուի՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժութային ավանդները համարվում են մեկ ավանդ:
9. **Տոկոսների հաշվարկի օրինակներ**
   - **Տարեկան պարզ տոկոսադրույք՝ տարեկան կտրվածքով ավանդային պայմանագրով սահմանված տոկոսադրույք, որի հիման վրա բանկը հաշվարկում է ավանդատուին վճարման ենթակա տոկոսագումարները:**

Օրինակ 1. Ավանդ «Շահավետ»

Ավանդի գումար	100,000 ՀՀ դրամ
Ժամկետ	367 օր
Տոկոսների ստացման եղանակ	Ժամկետի վերջում
Տարեկան պարզ տոկոսադրույք	9.5%
Ավանդի ներդրման ամսաթիվ	01.10.2021թ.
Ավանդի վերադարձման և տոկոսների վճարման ամսաթիվ	02.10.2022թ.
Վճարվելիք տոկոսագումար (չի հաշվարկվում Ավանդի վճարման օրը)	100,000*9.5/100/365*366 = 9,526.02 ՀՀ դրամ
Եկամտային հարկ	10%
Վճարվելիք տոկոսագումար հարկումից հետո	9,526.02 - 9,526.02*10/100 = 8,573.42 ՀՀ դրամ

Օրինակ 2. Ավանդ «Շահավետ՝ համալրման հնարավորությամբ»

Ավանդի գումար	100,000 ՀՀ դրամ
Ժամկետ	731 օր
Տոկոսների ստացման եղանակ	Ժամկետի վերջում
Տարեկան պարզ տոկոսադրույք	9.9%

Ավանդի ներդրման ամսաթիվ	12.07.2021թ.
Ավանդի վերադարձման և տոկոսների վճարման ամսաթիվ	13.07.2023թ.
Ավանդի գումարի ավելացում 50,000 ՀՀ դրամ	25.04.2022թ.
Վճարվելիք տոկոսագումար (չի հաշվարկվում Ավանդի վճարման օրը)	(100,000*9.9/100/365*730)+(50,000*9.9/100/365*443)= = 25,807.80 ՀՀ դրամ
Եկամտային հարկ	10%
Վճարվելիք տոկոսագումար հարկումից հետո	25,807.80-25,807.80*10/100 = 23,227.02 ՀՀ դրամ

Օրինակ 3. Ավանդ «Շահավետ՝ մասնակի նվազեցման և վաղաժամկետ դադարեցման հնարավորությամբ»

Ավանդի գումար	100,000 ՀՀ դրամ
Ժամկետ	181 օր
Տոկոսների ստացման եղանակ	Եռամսյակային
Տարեկան պարզ տոկոսադրույք	8.1%
Ավանդի ներդրման ամսաթիվ	05.04.2022թ.
Ավանդի վերադարձման և տոկոսների վճարման ամսաթիվ	03.10.2022թ.
Տոկոսների առաջին կապիտալացման ամսաթիվ	05.07.2022թ.
Կապիտալացվող տոկոսագումար Կապիտալացվող զուտ տոկոսագումար (10% հարկումից հետո)	100,000*8.1/100/365*90 = 1,997.26 ՀՀ դրամ 1997.26-1997.26*10/100 = 1,797.53 ՀՀ դրամ
Ավանդի մայր գումար 05.07.2022թ. դրությամբ	100,000+1797.53 = 101,797.53 ՀՀ դրամ
Տոկոսների երկրորդ կապիտալացման ամսաթիվ	03.10.2022թ.
Կապիտալացվող տոկոսագումար Կապիտալացվող զուտ տոկոսագումար (10% հարկումից հետո) (չի հաշվարկվում Ավանդի վճարման օրը)	101797.53*8.1/100/365*90 = 2,033.16 ՀՀ դրամ 2033.16-2033.16*10/100 = 1,829.85 ՀՀ դրամ
Ավանդի վերջնական մնացորդ առ 03.10.2022թ.	101797.53+1829.85 = 103,627.4 ՀՀ դրամ

10. **Այլ տեղեկություններ,** Բանկի վերաբերյալ տվյալներ.
    - Գրանցման վկայական՝ թիվ 0176, տրված 10.12.1991թ., Բանկային գործունեության լիցենզիա՝ թիվ 40, տրված 10.12.1991թ.
    - Ծառայությունների ցանկը, որը Բանկը իրավունք ունի մատուցել՝ համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի Գլուխ 4-ի: